



PÁZMÁNY

Pázmány Péter Catholic University
Faculty of Humanities and Social Sciences

Department of Armenian Studies

Institution ID: F179633
1 Mikszáth Kálmán tér, 1088 Budapest

Նոյեմբեր 19, 2024, Պոլսափեշք

Յարգելի յանձնաժողով՝

Գրութիւնս պատճառով ընդհանրապէս կարծիք է Սարինէ Պետրոսյանի «Բարոյախրատական պատասխանատւութեան եւ կամքի ազատութեան խնդիրը 20-րդ դարի ամերիկեան վեպում (Թեոֆոր Դրայզեր, Մարիո Պյուզո, Հարրի Գրեյ)» ատենագրութեան շուրջ: Ընդհանուր առմամբ՝ ատենագրութիւնը որոշ մակարդակի վրայ տրամաբանօրէն կազմակերպուած հետազոտութիւն է: Ասոր համար բաւականին ծաւալուն աշխատանք տարուած է: Պատմական ակնարկներու եւ համագրութեան ներկայացումը լիակատար է: Սակայն ցաւօք՝ վերլուծական մակարդակի վրայ, ատենագրութիւնը կրնար աւելի նորարար եւ հարուստ ըլլար: Ստորեւ բերուած ֆենդատական դիտարկումներս եւ առաջարկներս կը բաժնեն երկու մասի՝ անդրադառնալով աշխատանքի խնդրականացմանը եւ վերլուծական մօտեցումին (մեթոդաբանութեան) կողմերուն:

Ատենագրութիւնը կը փորձէ վերլուծել գրականութեան կապակցութիւնը արդի Ամերիկեան քրիստոնեական աշխարհին հետ անցեալ դարուն: Խնդրականացումը՝ զոր անհրաժեշտ է ունէլ գիտահետազոտական աշխատանք կազմակերպելու եւ ուղղորդելու համար, յստակ չէ: Ատենագրութեան մէջ կը գրուի թէ «աշխատանքի օբյեկտը» «ամերիկեան դատաւարական համակարգի ամենաթողոյթունն ու դրանց բխող անհատի պատասխանատւութեան եւ ազատութեան հետ աղերսվող բազմաթիւ խնդիրներ[ու]» «ներկայացում»ն են ընտրուած վեպերու մէջ կամ վեպերու կողմէ (3): Նախ՝ պարզ չէ թէ որոնք են այս «բազմաթիւ խնդիրներ»ը: Երկրորդ՝ «ներկայացում» գաղափարը զոր հոս կը գործածուի խնդրական է, քանի զայն կը սահմանափակէ վերլուծութիւնը իրապատ՝ ըսելէ թէ սովորաբար

հասարակակիցական եւ հոգեբանական, հայեցակարգերու: Այս մասին աւելի ներքեւը: «Թեմայի արդիականությունը» (3) գոր կ'յաջորդէ եւս չափազանց լայն է, մասնաւորեցման կը կարօտի:

Շատ աւելի հետաքրքրական պիտի ըլլար եթէ գրականութեան եւ օրէնքի միջեւ կապը ի նկատի առնուէր նաեւ գրութեանական մակարդակի վրայ, ներբնոյնուով օրինակ ժակ Դերրիդայի 1979ի «(Գրական) սէռի օրէնքը» (La loi du genre), անգլերէն՝ "The Law of Genre" փորձագրութենէ:

Ընդհանրապէս, ներածականի մէջ (տես նաեւ այլուր) կը տրուին հեղինակներու անունները առանց յստակեցնելու թէ ճիշդ ինչ գաղափարներ առկայ են վերլուծման մէջ: Խնդրահարոյց են նաեւ միջարկուած թարգմանութիւնները՝ անոնք որոնք անգլերէն գրութիւնները ռուսերէնէն կը մէջբերեն, զօնէ օրինակ էջ 31: Ի՞նչու չը թարգմանել ուղղակի անգլերէնէ: Եւ վերջապէս՝ էջ 7ին մէջ՝ վերը, կարծէք թէ յղումներ կը պակսին:

Խնդրականացման գետնի վրայ չը հասցէագրուած սահմանափակումները կը շարունակուին ցաւօք ատենագրութեան մեթոդաբանական երեսին վրայ: Նախ՝ պարզ չէ մասնաշատուկ կապը հնադարեան ժամանակներու հետ, որուն կ'ակնարկուի նախ ներածականի սկիզբը եւ որուն առաջին գլուխի առաջին 22 էջերը կ'անդրադառանան, նորէն չափազանց ընդհանրական կերպով:

Պատմական այս երկար ակնարկը պարզ չէ թէ մասնաւոր կերպով ինչպէս կ'առնչուի աշխատութեան խնդիրին գոր Ի. դարու իրաւական եւ գրական առնչութիւններուն կ'արեւելուի: Այս ամենը կարելի էր խտացուած կերպով մէկ քանի էջատակի ծանօթագրութիւններով ներկայացնել՝ անշուշտ կեդրոնաւորով արդի ժամանակներու վրայ: Իսկ գլուխի երկրորդ բաժինը վերլուծական ընթերցումներ առանձնապէս չ'ըներ՝ սահմանափակուելով համառօտագրութիւններով: Այսպիսով՝ վերլուծութիւնը գրական գործերու պատմողական մակարդակէն անդին չի երթար՝ մնալով «ներկայացման» մակարդակի վրայ, անկարող մօտենալու գրութեանական խնդիրներուն ինչպէս արդէն վերը ակնարկեցի: Հոն ուր վերլուծութիւնը մէջբերումներ կ'ընէ սկզբնաղոյրներէ՝ մեկնութիւնները կը մնան գուտ պատմողական մակարդակի վրայ: Հոս եւս վերլուծական մօտեցման գետնի վրայ առիթ մը եւս բաց կը թողնուի. վերլուծել ոչ միայն պատմումներ այլ նաեւ թէ ինչպէս գրական լեզուն՝ այս պարագային անգլերէնը, կ'առնչուի օրէնքին: Հաճախ գրողները՝ զոնէ բարձր գրականութիւն արտադրողները, օրէնքին կ'ընդլուսան: Ուրեմն՝ գրականութիւնը գուտ չի «ներկայացներ» քրեական

աշխարհը, այլ նաև խորհային կապ ունի անոր հետ: Ուրեմն՝ ցաւօք, աշխատութիւնը կը մնայ հասարակագիտական եւ հոգեբանական կանխատեսելի վերլուծական հորիզոններու ներսը: Հոս է որ գրականութեան իրայատուկ կապակցութիւնը օրէնքի հետ կը մնայ չը պեղուած:

Ընդհանուր առմամբ՝ ատենագրութիւնը վերլուծական լուրջ նիգ է: Փափաքը կ'յայտնեն ընթերցելու անոր հետագայ զարգացում տարբերակները:

Լաւագոյն մաղթանքներով՝

Դոկտ. Կարէն Զալլաթեան
Իսսախօս, Դոկտորական Կանադի Անդամ
Հայագիտական Բաժին
Պազմանի Պէտէր Կաթողիկէ Համալսարան
Պուտափեթթ, Հունգարիա

